

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԻՐԻԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԱՐԱՔԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՎԻՃԱԿԸ ԵՐԻՏՅՈՒՐԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ

1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղաշրջումը մեծ հույսեր ներշնչեց Օսմանյան կայսրության ոչ թուրք, այդ թվում նաև արաբ ազգաբնակչությանը: Ոգևորված երիտթուրքերի՝ Օսմանյան կայսրության ողջ ազգաբնակչության հավասարության խոստումներով, արաբների մի մասը հնարավոր էին համալուծ կայսրության սահմաններում ազգային ինքնավարության ձեռքբերման իրականացումը: Պատահական չէ, որ Սահմանադրության՝ վերականգնումից անմիջապես հետո արաբական մի շարք կազմակերպություններ ակտիվորեն սկսեցին արտահայտել իրենց այդ ձգտումը՝ վարչական ապակենտրոնացման պահանջի հետ միասին առաջ քաշելով նաև արաբական վիլայեթներում արաբներնը պաշտոնական լեզու և, նույնիսկ, օսմանյան խորհրդարանում այն աշխատանքային լեզու ճանաչելու հարցը:

1908 թ. սեպտեմբերին Ստամբուլում հիմնված «Արաբա-օսմանյան եղբայրություն» («Ալ-Իխուա ալ-Արաբի ալ-Օսմանի») կազմակերպությունը, որն իր մասնաճյուղերն ուներ Սիրիայում և Իրաքում, և որը չէր քաջցնում իր համակրանքն ու հավատարմությունը երիտթուրքերին և Սահմանադրության դյույթներ պահպանելու գործում վերջիններիս աջակցելու պատրաստակամությունը՝ իր առջև դրված խնդիրների շարքում կարևորելով նաև արաբներն լեզվով լուսավորության տարածման հարցը²:

Սակայն շատ շուտով, հատկապես 1909 թ. ապրիլի 13-ին ընդդիմադիր ուժերի կազմակերպած հակաերիտթուրքական հեղաշրջման փորձից՝ հետո երիտթուրքերի ղեկավարները կատարելապես հրաժարվեցին նախկին խոստումներից՝ իրենց քաղաքականությամբ հիասթափեցնելով Օսմանյան կայսրության ազգություններին, այդ թվում նաև արաբներին, հանգամանք, որն առավել ինտենսիվ և հետևողական դարձրեց իրենց նպատակներին հասնելու վերջիններիս ջանքերը: Հարկ է նշել, որ այդ ջանքերը վառ կերպով դրսևորվեցին հատկապես կայսրության Սի-

ըլիական վիլայեթներում⁴, որոնք մի շարք հանգամանքների բերումով անհամեմատ զարգացած էին հասարակական-քաղաքական առումով:

Օսմանյան կայսրության արաբ ազգաբնակչության՝ ինքնավարության համար պայքարում կենտրոնական տեղ էր գրավում արաբերեն լեզվի պահպանման ե նրա կիրառման շրջանակները հնարավորինս ընդլայնելու խնդիրը, ինչը, ի դեպ, լայնորեն արժածվել է մաս արաբ լուսավորչների գործերում: Պատահական չէ, որ կայսրությունում արաբերեն լեզվի ճանաչման և հստակապես արաբաբնակ շրջաններում նրա կարգավիճակի հալոցը մեծապես կարևորվում էր արաբական կուսակցությունների և կազմակերպությունների մեծ մասի ծրագրերում և առանց բացառության նրանց ընդունած բոլոր փաստաթղթերում:

Չնայած ձևակերպումների մեջ առկա տարբերություններին՝ արաբների և բուլղո, մաս լեզվական պահանջների հիմնական բովանդակությունը գրեթե միշտ նույն էր: Մասնավորաբար, 1912 թ. վերջին Կահիրեում Սիրիայից, Լիբանանից և Պաղեստինից արտագաղթած արաբ ազգայնականների ստեղծած «Լարիչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության» («Հիզբ ալ- Լամարբազիյա ալ-Իդարիյա ալ-Օսմանի») ընդունած ծրագրում, արտահայտելով իրենց հավատարմությունն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման գաղափարին և միայն նրա սահմաններում ինքնավարություն ձեռք բերելու մտադրությանը, միաժամանակ պահանջվում էր օսմանյան բուլղո վիլայեթներում բուլղերենի և տեղաբնիկների ազգային լեզվի համատեղ գործածություն, ինչպես մաս վիլայեթներում մայրենի լեզվով տարական կրթության իրականացում (հոդվ. 14 և 15)⁵: Հասկանալի է, որ կուսակցությանն առավելապես հուզում էր արաբերեն լեզվի կարգավիճակը Սիրիական վիլայեթներում:

Արաբերեն լեզվի հալոցը կարևոր տեղ էր գրավում մաս 1913 թ. հունվարին Բեյրութում ստեղծված Բարենդությունների ընկերության վարչական ապակենտրոնացման սկզբունքների վրա հիմնված բարենդությունների ծրագրում: Եվս մեկ անգամ հավաստելով, որ արաբներն անջատողական ուրև ձգտում չունեն, այլ, ընդհակառակը, հակված են Օսմանյան կայսրության մաս կազմել և, ավելին, աջակցել նրան՝ դիմկայելու Լվրուպայի հնարավոր նկրտումներին, այնուամենայնիվ, իրենց այդ հավատարմությանը որպես փոխհատուցում պահանջվում էր ծայրահեղ ինքնավարության մոտեցող ապակենտրոնացում: Պահանջների սկզբունքային կետերից էր, մախ և առաջ, արաբերեն լեզվի ճանաչումը որպես արաբական վիլայեթների պաշտոնական լեզու՝ բուլղերենը թողնելով միայն որպես Ստամբուլի հետ հաղորդացման միջոց: Միաժամանակ առաջարկվում էր, որ արաբերեն լեզուն ընդունվի օսմանյան խորհրդարանում (հոդվ. 1): Որպես հաջորդ քայլ՝ պահանջվում էր մաս, որ Սիրիա-

յում ճշանակվելին միայն տրաքերեն լեզվին տիրապետող պաշտանյաներ(հոռվ. 2)՝:

Այն հանգամանքը, որ ծուսգրում արաքերեն լեզվի հարցն զբաղեցնում է, առաջին երկու կետերը, ինքնին վկայում է այդ խնդրին տրվող կարևորության մասին:

Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այնպիսի հեղինակավոր համաժողովի ընդդրոնած որոշումը, ինչպիսին 1913 թ. հունիսին Փարիզում կայացած Արաբական կոնգրեսն էր⁸:

Հիմնավորելով Օսմանյան կայսրության արաբական վիլայեթների ապակենտրոնացման անուսժեշտությունը և շարադրելով այդ նախագծի հիմնական սկզբունքներն ու դրա իրականացման պայմանները՝ կոնգրեսի մասնակիցներն ընդունած որոշման մեջ առանձին կետ էին հատկացնում լեզվի հարցին՝ դարձյալ շեշտը դնելով այն բանի վրա, որ արաքերեն լեզուն ճանաչվի օսմանյան խորհրդարանի կողմից և կայսրության արաբաբնուկ տարածքներում համարվի պաշտոնական լեզու (հոռվ. 5)⁹: Նախագծին կից լրացման մեջ հատուկ ընդգծվում էր, որ եթե կոնգրեսի ընդունած որոշումներն պատշաճ ձևով չիրականացվեն, ապա Սլիական Արաբիայի Բարենո-րոզիչներին կոմիտեի սնդամները կիրաժարվեն իրենց պարտականությունների կատարումից Օսմանյան կայսրությունում¹⁰:

Ուշագրավ է, որ կոնգրեսի ընդունած որոշումները ներկայացվում էին որպես օսմանյան սիրիացիների և արաբների քաղաքական ծրագիր և նախագրույացվում էր, որ խորհրդարանական ընտրություններում ոչ մի թեկնածու իրենց աջակցությանը չի արժանանա, եթե նախապես չպարտավորվի պաշտպանել և իրականացնել վերոհիշյալ ծրագիրը¹¹: Այլ բան է, անշուշտ, որ, ինչպես ցույց տվեց ապագան, կոնգրեսի գործնական արդյունքները տարբեր հանգամանքների բերումով չափազանց համեստ եղան: Այն գործիչները, որոնք պետք է իրականացնեին կոնգրեսի որոշումները, չկարողացան գտնել դրսև համար արդյունավետ միջոցներ: Ավելին, թուրքական կառավարող շրջաններին հաջողվեց նրանց հակել փոխզիջման, ինչը, իրականում, ճշանակում էր կոնգրեսում հռչակված սկզբունքներից, այդ թվում նաև լեզվական պահանջների հիմնական մասից հրաժարում: Կոնգրեսի որոշման կետերի իրականացման հնարավորության խափանմանը մեծ չափով նպաստեցին հատկապես արսբ ազգայնականների միջև առկա հակասությունները, ինչպես նաև երիտթուրքերի «Մութթուն և առաջադիմություն» կուսակցության արաբ կողմնակիցների դիրքորոշումը, որոնք նպատակահարմար էին գտնում «Արաբների իսկ շահերից ելնելով՝ արաբական երկրներում թուրքերենը թողնել որպես պաշտոնական լեզու»¹², փորձելով համոզել, որ հակառակ դեպքում կտուժեն միայն արաբները:

Լեզվի պահպանման հարցում արաբների շահագրությունը և այդ ուղղությամբ նրանց ջանքերը, թեևս, անմիջապես թելադրվում էին

հետևյալ հիմնական հանգամանքներով: Հատկապես արաբների պարագայում, երբ կրոնական գործոնը նպաստում էր երիտթուրքերի որդեգրած օսմանիզմի գաղափարների իրականացմանը, լեզվի պահպանումը դառնում էր նրանց միասնականությունն ու ինքնությունը պահպանելու կարևորագույն, առաջնահերթ միջոց և, միաժամանակ, ստեղծված իրադրության պայմաններում վերջիններիս տալիս էր որպես ընդհանրության, որպես ժողովրդի և որպես ազգի իրավունքների անվիճելիությունը հաստատելու այդքան անհրաժեշտ հնարավորություն¹³:

Այն հավասարապես հետևանք էր նաև երիտթուրքերի որոշակի քաղաքականության, սրտեղ լեզվական ծուլման խնդիրը կարևոր տեղ էր զբաղում՝ համարվելով նաև ապակենտրոնացումը կասեցնելու միջոց: Անվերադարձ անցել էին այն ժամանակները, երբ երիտթուրքերը, կայսրության տարբեր ազգերի հավասարության ջատագովի կեցվածք ընդունած, փորձում էին սիրաշահել վերջիններիս և բոլոր միջոցներով սուս-սլանել իրենց նկատմամբ վստահությունը: Սակայն ոչ թուրք ազգաբնակչության բացահայտ ընդդիմությունն օսմանիզմի գաղափարի իրականացմանը և կայսրության մասնատման իրական հեռանկարը երիտթուրքերին ստիպեց հրաժարվել իրենց իսկական դիտավորությունները սքուլելու միտումից և ձեռնամուխ լինել կայսրության ոչ թուրք ազգությունների բռնի ծուլմանն ուղղված անթաքույց քաղաքականության: Դս. անշուշտ, կարելի է համարել կայսրության նախկին իշխանությունների վարած թուրքացման քաղաքականության շարունակությունը: Երիտթուրքերի այս կուլմնորոշումը վերջնականապես ձևակերպվեց 1911 թ. հոկտեմբերին կայացած համագումարում, որի ընդունած որոշման մեջ ուղղակիորեն հայտարարվում էր, որ վաղ թե ուշ իրականացվելու է բոլոր օսմանահպատակների լիակատար թուրքացումը, որ կայսրության ոչ թուրք ազգություններին պետք է զրկել կազմակերպվելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը թուրքական կայսրության նկատմամբ դավաճանությունն են: Որոշման մեջ հստակապես նշվում էր, որ ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել իրենց կրոնը, սակայն ոչ լեզուն¹⁴, հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է երիտթուրքերի կողմից այդ գործոնին տրվող կարևորության մասին: Լեզվական ճնշումը, այսպիսով, վերջիններիս կողմից դիտվում էր որպես թուրքերենի գերակայության անհրաժեշտ նախապայման, ինչը և, նրանց խորին համոզմամբ, կհանդիսանար կայսրության ոչ թուրք սզգաբնակչության ծուլման առավել արդյունավետ միջոց:

Հայտնի է, սակայն, որ երիտթուրքերի այս քաղաքականությունը ոչ միայն չնպաստեց օսմանիզմի հայեցակարգի իրականացմանը, այլև, ի վերջո, ճակատագրական եղավ իրենց իսկ կուսակցության համար: Ի-զուր չէ, որ Ջ. Անտոնիուսը, արաբների ազգային զարթոնքին մվիրված իր ուսումնասիրության մեջ հատկապես ընդգծելով երիտթուրքերի կող-

միջ կայսրության ազգային կազմի յուրահատկությունների անտեսման և ազգությունների ապակենտրոնացման պահանջներին ընդդիմանալու հանգամանքը, իշխանության գալուց հետո վերջինիս ամենակոպիտ սխալը և նրա անհաջողության ուղղակի պատճառ է համարում հենց պետության կենտրոնացման քաղաքականության որդեգրումը¹⁵:

Կայսրության արաբ ազգաբնակչության նկատմամբ օսմանիզմի քաղաքականությունն իրականացնելիս երիտթուրքերը հիմնական շեշտելից մեկը դնում էին լեզվական ձուլման վրա: Եթե սկզբնական շրջանում վերջիններս արաբական վիլայեթներում արաբերեն լեզվի գործածմանը զոնե արտաքուստ վերաբերվում էին քիչ թե շատ համոզմունքով, ապա ավելի ուշ վիճակը փոխվեց: Այլևս հարկ չհամարելով որևէ չափով սքոլել իրենց իսկական մտադրությունները՝ նրանք բացահայտորեն արտահայտում էին իրենց ծայրահեղ դժգոհությունն՝ արաբների՝ իրենց մայրենի լեզվով խոսելու փաստը զնահատելով որպես թուրքերենի նկատմամբ արհամարհանքի դրսևորում և, միաժամանակ, չափազանց վտանգավոր իրողություն: Նրանք փորձում էին այդ հանգամանքն օգտագործել արաբների նկատմամբ նոր, ծայրահեղ ճնշումներ գործադրելու նպատակով, ընդհուպ մինչև ստիպել մոռանալ իրենց լեզուն և խոսել «տիրոջ լեզվով», այսինքն՝ թուրքերենով¹⁶: Իթքիհադականների ներկայացուցիչներից մեկը՝ Ջելալ Նուրին, գրում էր. «...Արաբական երկրները, հատկապես Եմենը և Իրաքը, պետք է վերածվեն թուրքական գաղութների՝ թուրքերեն լեզուն տարածելու նպատակով...: Երաշխավորելու համար մեր գոյությունը՝ անհրաժեշտ է բոլոր արաբական երկրները դարձնել թուրքական»¹⁷:

Ոչ թուրք ազգաբնակչությանը ձուլելու երիտթուրքերի այս սևեռում գաղափարն իր վառ արտացոլումը գտավ վիլայեթների մասին օրենքում (1913 թ.): Չնայած այն հավաստիացումներին, որ հինգ տարվա ընթացքում սանջակների կենտրոններում գտնվող պետական դպրոցներում ուսուցումը վարվելու է տեղական (տվյալ դեպքում՝ արաբերեն) լեզվով, այնուամենայնիվ, այն սահմանափակվում էր մի շարք վերապահումներով: Բացի այն, որ դպրոցներում պահպանվում էր թուրքերենի պարտադիր ուսուցումը, երկու գլխավոր առարկաների՝ պատմության և աշխարհագրության դասավանդումը ևս պետք է անցկացվեր թուրքերենով: Իսկ վիլայեթների կենտրոններում գտնվող երկրորդ աստիճանի դպրոցներում թույլատրելի էր համարվում միայն թուրքերեն լեզվով ուսուցումը¹⁸:

Ամիջապես ձուլման նպատակ էր հետապնդում նաև վիլայեթներում տարրական դպրոցների նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը: 1913 թ. ընդունված օրենքով առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների միավորման անվան տակ «միասնական տարրական դպրոցի» շրջանակներում վիլայեթների առաջին աստիճանի դպրոցները պետության հսկողության տակ դնելու միջոցով, փաստորեն, ծայրահեղ չափով

յին պատերազմի նախօրյակին՝ արաբները կայսրության 50% էին)²⁵, և նրանց հետ կտրուկ առճակատումը կարող էր խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Ոչ պակաս կարևոր գործոն էր նաև այն, որ արաբներն էլ և մնում է իսլամի և Ղուրանի լեզու, ինչը երիտթուրքերի կողմից չէր կարող անտեսվել:

Այսպիսով դժվար չէ համոզվել, որ երիտթուրքերի գիջումները ունեին գուտ մարտավարական նպատակներ և որևէ չափով չէին կարող փոխել նրանց քաղաքականության բնույթը կամ գոնե դրա տպավորությունը ստեղծել: Անառարկելի է, որ այդ քաղաքականությունը, որքան էլ երբեմն զգուշավոր և քողարկված, երիտթուրքերի կառավարման ողջ շրջանում մշտապես և առաջին հերթին նպատակաուղղված էր օսմանիզմի գաղափարախոսության իրականացմանը, այն է՝ ամենատարբեր, այդ թվում նաև լեզվական ճնշման միջոցով կայսրության արաբ ազգաբնակչության ձուլմանը:

ARAM GASPARYAN

THE STATUS OF ARAB LANGUAGE IN THE SYRIAN VILAYETS OF OTTOMAN EMPIRE IN THE PERIOD OF YOUNG TURKS

The paper deals with the status of Arabian language in Syrian vilayets of Ottoman Empire in the period of Young Turks. After the revolution of 1908 several Arabian districts raised the question of decentralization of Arabian vilayets, at the same time dealing with the matter of development of the status of Arabian language. The matter of the language has an important place in the plans and decision of Arabian organizations. But the Young Turks continued their policy of assimilation of non-turkish as well as arabian population, limiting and making pressure on the Arabian language.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օսմանյան կայսրության առաջին սահմանադրությունը հռչակվել էր 1876 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն արդեն 1878 թ. սկզբին Աբդուլ Համիդն այն չեղյալ հայտարարեց: Սահմանադրությունը վերականգնվեց միայն 1908 թ. հուլիսի 24-ին երիտթուրքերի կողմից:
2. З.И.Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, с. 132.
3. В.И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977, с. 217.
4. Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Սիրիական վիլայեթները կազմի մեջ մտնում էին Բեյրութի, Դամասկոսի, Հալաբի վիլայեթները, Լեռնային Լիբանանի մուրասառիֆությունը և Երուսաղեմի սանջակը: Sten, D. Pipes, Greater Syria The History of an Ambition, N.Y., 1990, p. 16.

5. Մանրամասն տես՝ Bassam Tibi, Arab Nationalism a Critical Enquiry. L., 1981. p. 47-62
6. Zein N. Zeine. Arab Turkish Relations and the Emergence of Arab Nationalism. Beirut, 1958, p. 83
7. A Programme of Reforms Based on Administrative Decentralization, տեքստը տես՝ Zein N. Zeine, նշվ. աշխ., էջ 137-138 (Appendix D); Հ.Ս.Սարգսյան, Ա.Հ.Թոփալյան, Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI. Ե., 1974, էջ 220-221.
8. Արաբական կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում 1913թ. հունիսի 18-23-ը: Կոնգրեսին մասնակցում էին 24 պատգամավորներ, որոնց մեծ մասը Սիրիայից էին, երկուսը՝ Իրաքից, երեքը՝ ներկայացնում էին ԱՄՆ-ի արաբներին: Մանրամասն տես՝ G.Antonius, The Arab Awakening. The Story of the Arab National Movement. N.Y., 1946 p. 144-115. Э. Тума, Национально-освободительное движение и проблемы арабского единства., М., 1977, с. 116-117.
9. Resolution Votes par le Congres Arabe, տեքստը տես՝ Zein N. Zeine, նշվ. աշխ., էջ 135-136 (Appendix C); Հ.Ս.Սարգսյան, Ա.Հ.Թոփալյան, Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI. Ե., 1974, էջ, 222-223.
10. Նույն տեղում.
11. Նույն տեղում.
12. Л.Н.Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, с. 306.
13. Э. Тума, նշվ. աշխ., էջ 117.
14. Э.Ю.Гасанова, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок. (1908-1914г.г.), Б., 1966, с.43-44.
15. G.Antonius, նշվ. աշխ., էջ 107.
16. Э.И.Левин, նշվ. աշխ., էջ 133.
17. Նույն տեղում.
18. F. Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914. Oxf. 1969, p.134
19. А.Д.Желтяков, Ю.А.Петросян, История просвещения в Турции, М., 1965, с.108-109.
20. Л.Н.Котлов, նշվ. աշխ., էջ 40.
21. А.Д.Желтяков, Ю.А.Петросян, նշվ. աշխ., էջ 108-109.
22. Х.З.Габидуллин, Младотурецкая революция, М., 1936, с. 145
23. Ռ.Ա.Սաֆրաստյան, Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում (1908-1916 թ.թ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Ե., 1989, էջ 244.
24. Նույն տեղում.
25. М.С. Лазарев, Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960, с.13.